4252

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## 04.09.2014թ. ԿՆՔՎԱԾ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ N ԴԴ-ՇՀԾՁԲ-11/9-03-25 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «26» դեկտեմբերի 2014թ.

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ն ՝ ի դեմս տնօրեն Ա.Պետրոսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 04.09.2014թ. կնքված N ԴԴ-ՇՀԾՁԲ-11/9-03-25 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի 4.1 կետում «**1450000 (մեկ միլիոն չորս հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամ» բառերը փոխարինել «**1740000 (մեկ միլիոն յոթ հարյուր քառասուն հազար)** ՀՀ դրամ» բառերով:

1.2 Պայմանագրի N1 հավելված հանդիսացող «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում համապատասխան բոլոր մասերում «Ծառայության մատուցման ընդհանուր ժամկետն է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 31-րդ աշխատանքային օրվանից մինչև 2014թ. դեկտեմբերի 26-ը ներառյալ» բառերը փոխարինել «Ծառայության մատուցման ընդհանուր ժամկետն է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 31-րդ աշխատանքային օրվանից մինչև 2014թ. դեկտեմբերի 30-ը ներառյալ» բառերով:

1.3 Պայմանագրի N2 հավելված հանդիսացող վճարման ժամանակացույցը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N1-ի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| | |
|---|---|
| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
| ***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ*** | ***«Անուշ Պետրոսյան» Ա/Ձ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 | Հասցե՝ ք.Երևան. Արշակունյաց 5/7 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 49557658 |
| Հ/Հ՝ 900011192151, 900011192052 | Հ/Հ՝ 1570004526880100 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Ղեկավար՝ Կ. Փոլադյան | Տնօրեն՝ Ա.Պետրոսյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված 1
04.09.2014թ. կնքված N ԴԴ-ՇՀԾՁԲ-11/9-03-25 պայմանագրի
26.12.2014թ. կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| Ծրագիր՝ 03 03 01 05՝ ՀՀ դատարանների պահպանում | | | | | | |
| 1. | Սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայություններ | 725000 | 1450000 | 1450000 | 1450000 | **1450000** |
| Ծրագիր՝ 03 03 01 04՝ ՀՀ դատարանների պահուստային ֆոնդ | | | | | | |
| 1. | Սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայություններ | ---- | ---- | ---- | 290000 | **290000** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151, 900011192052
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Ղեկավար՝ Կ. Փոլադյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

***«Անուշ Պետրոսյան» Ա/Ձ***
Հասցե՝ ք.Երևան. Արշակունյաց 5/7
ՀՎՀՀ՝ 49557658
Հ/Հ՝ 1570004526880100
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Տնօրեն՝ Ա. Պետրոսյան
Կ.Տ.